Մեք զչափ և զտեսակ օժանդակութեանց թողեալ եմք ի կամս նուիրատուին, և հարկ համարիմք ծանուցանել, զի ամենայն ծախք ուսմանց և սննդեան ժառանգաւորաց Ճեմարանիս լինելոց են ի Գանձարանէ Սրբոյ Աթոռոյս. միայն եթէ ցանկանայցէ ոք ընդունել յիւր վերայ ազգասիրաբար զծախս միոյ ուրուք ժառանգաւորի, այնպիսին ամի ամի պարտի հատուցանել ի գին որդեգրութեան բուրլիս արծաթոյ 300՝ կամ յինքնէ ուղղակի և կամ ընդ ձեռն տեղական Առաջնորդաց հատուցանելով զայն ի Գանձարան Սրբոյ Աթոռոյս, իսկ զընտրութիւն որդեգրին վերապահեմք մեզ և թեմական Առաջնորդացն մերոց նկատողութեան: Շնորհակալու մտօք յայտ առնեմք և զայն՝ զի եղեն նա և այնպիսի բարերարք, որք ի յաւերժական յիշատակ անուանց իւրեանց և բարեգործութեանց առատաձեռնեցին ի Գանձարան Սրբոյ Աթոռոյս զպանքական տոմսակս և զմշտնջենաւոր դրամագլուխս, զորս մտադիր եմք հետզհետէ տպագրութեամբ ի լոյս ընծայել, իսկ զանուանս նոցին արձանագրեցաք այժմէն ի յիշատակարանս ազգասէր բարերարաց Սրբոյ Աթոռոյս և նորակառոյց Ճեմարանիս:

Եւ այսպէս գոլով՝ զի սիրեցեալ որդիք մեր համայն և ազգս Հայոց ուրախութեամբ սրտի պատրաստ է ընդունել և սիրալիր համակրութեամբ պսակել զընդհանրաշահ ձեռնարկս մեր՝ յամենայնի լեալ մեզ աջակից և խորհրդատու՝ վառեալ սիրով միութեան ընդ բազմաչարեան կեդրոն լուսածին հաւատոյ իւրոյ և կրօնի աւանդելոյ մեզ ի սրբազան Առաքելոցն մերոց Թադէոսէ և Բարդուղիմէոյ և յառաքելահաւասար առնէն Աստուծոյ ի սրբոյն Գրիգորէ Պարթևէ, խնդրեմք ի ձէնջ՝ սիրեցեալ որդեակք իմ, զի ուր ուրեք և գտանիցիք վառեալ ըստ մարմնոյ բերմամբ արկածից ժամանակաց՝ ըստ հոգւոյ ձերոց ջերմեռանդութեան փութասջիք միաբանել սերտ սրտիւ և անլուծանելի շաղկապաւ միութեան ընդ Մօրս հասարակաց սրբոյ Էջմիածնի, ոչ դարձուցանելով բնաւ զաչս մտաց ձերոց ի հոգևորաց աստի գանձուց փրկութեան և դաստիարակութեան: Իսկ մեք այսու Հայրապետական Կոնդակաւ մերով մաղթեմք յամենառատ Բարձրելոյն շնորհել Ձեզ և Մեզ զօրութիւն և զյաջողութիւն միաբանական սիրով շահաւետելոյ ի յառաջադիմութիւն ընդհանրութեան ազգիս և մերս այս Ճեմարանի, զոր վահանափակ արարեալ սիրոյ մերոյ առաւելութեամբ յերևելի և յաներևոյթ որոգայթից Թշնամեաց՝ կարող լիցուք զակընկալեալն ի նմանէ քաղել տակաւ առ տակաւ զբազմաբեղուն հունձս Ճշմարիտ կրթութեան և դաստիարակութեան Ազգիս առ յապագայն ի ջահս հաւատոյ, յուսոյ և սիրոյ, և Արարչին ամենեցուն մատուսցուք զլիաբերան գոհութիւն և զփառս յաւիտեանս յաւիտենից, ամէն:,,

---

## ՀԱՄԱՌՕՏ
## ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

---

Ա. Նպատակ Ճեմարանի Ս. Էջմիածնի է՝ պատրաստել զկուսակրօն եկեղեցականս բարեկիրթս և բազմահմուտս Եկեղեցական և Աստուածաբանական

ուսմանց եւ արտաքին կարեւոր եւ կենցաղօգուտ գիտութեանց եւ լեզուաց ի պէտս Հայաստանեայց Եկեղեցւոյ :

Բ, Ճեմարան Ս. Էջմիածնի պարտի լինել ընդ ծայրագոյն իշխանութեամբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց :

Գ, Ճեմարան Ս. Էջմիածնի պահպանի արդեամբք Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի եւ նուիրաբերութեամբք Հայոց :

Դ, Բաց ի յընդհանուր վերահսկողութենէ Վեհ. Կաթուղիկոսի՝ վարէ զներքին եւ զարտաքին կառավարութիւնս Ճեմարանի Ս. Էջմիածնի՝ Վերատեսուչն նորին՝ օգնականութեամբք 1, Ուսումնական եւ 2, Տնտեսական ժողովոց եւս 3, Ընդհանուր Խորհրդարանի :

Ե, Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի բաց ի Վերատեսչէ գոն՝ Օգնական Վերատեսչի, Ուսուցչապետք եւ ուսուցիչք, Վերակացուք, Բժիշկ, Մատենադարանապետ, Քարտուղար, Տնտես եւլն :

Զ, Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի ընդունին Հայկազն պատանիք յամենայն վիճակաց Եկեղեցւոյ Հայաստանեայց, որք պարտին լինել որբք կամ ի դասակարգէ աղքատ ծնողաց, եւ ամենքեան պահպանին եւ ուսանին ձրիապէս :

Է, Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի ընդունին յառաջադէմ եւ ընդունակ աշակերտք, աւարտեալքն զուսմունս իւրեանց ի փանօրայս եւ ի Թեմական Դպրանոցս, յուսումնարանս եւ ի Միջնակարգ եկեղեցական դպրոցս, ըստ նախընթաց հարցաքննութեան ի Ճեմարանի՝ համաձայն առանձին Հրահանգի:

Ը, Հասակ ցանկացողաց մտանել ի Ճեմարան պարտի լինել ոչ նուազ քան զ14 ամն եւ ոչ առաւել քան զ16 :

Թ, Ճեմարանն ունի զվեց լսարանս (դասարան) իւրաքանչիւրն մի ամեայ ընթացիւք (շրջանաւ):

Ժ, Ի Ճեմարանի ամենայն առարկայք եւ գիտութիւնք աւանդին յատկապէս ըստ սովորութեան մայրենի լեզուաւ :

ԺԱ, Ի Ճեմարանի աւանդին:

1. Կրօնագիտութիւն ընդարձակ՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ :

2. Պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ :

3. Ընդհանուր Եկեղեցական պատմութիւն :

4. Գիտութիւն եւ մեկնութիւն Սուրբ Գրոց :

5. Աստուածաբանութիւն տեսական, գործնական, բարոյական եւ բաղդատական:

6. Տօմարագիտութիւն Եկեղեցական եւ հմտութիւն Ժամակարգութեան :

7. Կրթութիւն Եկեղեցական բեմբասացութեան :

8. Վարք սրբոց հարց յիշատակելոց ի տօմարի Հայաստանեայց Եկեղեցւոյ :

9. Եկեղեցական իրաւաբանութիւն :

10. Ազգային եւ Ընդհանուր Դիցաբանութիւն :

11. Փիլիսոփայութիւն (Հոգեբանութիւն եւ Տրամաբանութիւն) եւ պատմութիւն փիլիսոփայութեան :

12. Ազգային պատմութիւն եւ Աշխարհագրութիւն:

13. Ընդհանուր եւ Ռուսաց պատմութիւն եւ աշխարհագրութիւն :

14. Թուաբանութիւն, Բնագիտութիւն (Ֆիզիքա) եւ Տիեզերագրութիւն :

15. Բնական պատմութիւն :

16. Հայկաբանութիւն հարուստ եւ մատենագրութիւն Հայոց :

17. Լեզու Ռուսաց :

18. Լեզու Գաղղիացւոց :

19. Լեզու Լատինացւոց :

20 Լեզու Յունաց :

21. Լեզու Եբրայեցւոց :

22. Գծագրութիւն եւ նկարչութիւն (առաւելապէս եկեղեցական) :

23 Ձայնագրութիւն Հայոց :

ԺԲ, Ուսումնաւարտ աշակերտք Ճեմարանի պարտին ընդունիլ յատկապէս զաստիճան վարդապետութեան եւ առհասարակ եկեղեցականութեան, եւ իբրեւ բացառութիւն՝ (կարգին) յուսուցչութիւն յազգային ուսումնարանս :

ԺԳ, Վասն ներքին եւ արտաքին կառավարութեան ճեմարանի Ս. Էջմիածնի ունի հրատարակիլ առանձին ընդհանուր կանոնադրութիւն :

---

## ՀՐԱՀԱՆԳ

### ՍԱԿՍ ԸՆՏՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԱՑ

#### ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

---

Որք (աշակերտք) պարտին լինել

1· 14—16 ամեայք։

2· Հակամէտ լիցին ի կղերականութիւն՝ սակս պատրաստելոյ զանձինս իւրեանց ի կուսակրօն պաշտօնեայս Եկեղեցւոյ Հայաստանեայց։

3· Իցեն որբք, կամ՝ որդիք աղքատ ծնողաց, առողջակազմք, փափկաձայնք, ուշիմք, վկայեալք ի բարի վարս, ո՛չ ապուշք կամ՝ ծոյլք՝ և անընդունակք ուսմանց, և ո՛չ խեղանդամք։

4· Ունիցին զվկայական ծննդեան և մկրտութեան, և վկայագիր բժշկէ վասն պատուաստի ծաղկին և առողջ կազմուածոյն, եւ ազատ լիցին ի ցեղական ախտակրութենէ։

5· Գիտասցեն զնէ

ա, զԱռաջին մասն Հայ. Քերականութեան.

բ, զՀամառօտ Քրիստոնէական վարդապետութիւն և զՊատմութիւն Հին և Նոր Կտակարանաց.

գ, զՌուսերէն (կամ զՎրաստան(?) սակս այլոց սահմանաց)։

դ, զՀամառօտ Ազգային Պատմութիւն.

ե, զՀամառօտ Ընդհանուր Պատմութիւն.

զ, զՀամառօտ Աշխարհագրութիւն.

է, զԱ. Մասն Թուաբանութեան։

6· Եթէ աշակերտքն իցեն անհամաձայն պահանջեալ վերոյիշելոց պայմանաց, անմիջապէս վերադառնան ուստի եկին։

---

## ՑՈՒՑԱԿ ՏԵՂԵԱՑ

### ՅՈՐՈՑ ՊԱՀԱՆՋԵՑԱՆ ԱՇԱԿԵՐՏՔ

**Վիճակ Երեւանայ**

| | Թիւ |
|---|---|
| Երեւան | 5 |
| Աղէքսանդրապօլ | 5 |
| Նախիջեւան - Հին | 1 |
| Ագուլիս | 2 |
| Վաղարշապատ | 1 |
| Տաթեւ | 1 |

**Վիճակ Վրաստանի և Իմերէթի**

| | |
|---|---|
| Տփխիս | 5 |
| Ախալցխա | 2 |
| Գանձակ | 1 |
| Ախալքալաք | 1 |
| Գօրի | 1 |
| Քութայիս | 1 |
| Սղնախ | 1 |

**Վիճակ Արցախու**

| | |
|---|---|
| Շուշի | 5 |
| Նուխի | 2 |

**Վիճ. Շամախւոյ**

| | |
|---|---|
| Շամախի | 2 |
| Բագու | 1 |
| Ղուբա | 1 |

**Վիճ. Աստրախանու**

| | |
|---|---|
| Աստրախան | 5 |
| Գզլար | 2 |
| Նոր - Արմաւիր | 1 |
| Մոզդոկ | 1 |
| Ստաւրապօլ | 1 |

**Վիճ. Բեսարաբիոյ և Ն. Նախիջեւանու**

| | |
|---|---|
| Նախիջեւան - Նոր | 4 |
| Քիշնեւ | 1 |
| Ոզգիրման | 1 |
| Թէոդոսիա | 1 |
| Սիմֆէրապօլ | 1 |
| Գարասուբազար | 1 |
| Օտեսա | 1 |
| Գրիգորապօլ | 1 |

**Ի Տաճկաստանէ**

| | |
|---|---|
| Կ. Պօլիս | 2 |
| Զմիւռնիա | 1 |
| Կարին | 1 |
| Մուշ | 1 |
| Վան | 1 |
| Կարս | 1 |
| Բագրեւանդ | 1 |
| Բաբերդ | 1 |
| Բաղէշ | 1 |
| Տիգրանակերտ | 1 |
| Եզնկայ | 1 |
| Շապինգարահիսար | 1 |
| Տրապիզօն | 1 |
| Կեսարիա | 1 |
| Գաղատիա | 1 |
| Եւդոկիա | 1 |
| Սեբաստիա | 1 |
| Եփեսոս | 1 |
| Մօլտօվալաքիա - Ռօման | 1 |
| Աւստրիա—Սուչավա | 1 |

**Ի Պարսկաստանէ**

| | |
|---|---|
| Դավրէժ | 2 |
| ՑԱսպահանէ ընդ Հնդկաստանի | 5 |

Համայնն ի միասին 75 աշակերտ։

---

## ՄԻԽՍ ԿՈՆԴԱԿՆ.

---

«Քանի՛ երջանիկ էր եկեղեցի Հայաստանեայց և որչափ բարձրագլուխ պանծայր փառօք և զարդու՝ մինչ առաջնորդէին նմին անձնուէր՝ բարեկիրթ և ուսեալ հովիւք և քաջ կրօնագէտ վարդապետք, որ գեղապաճոյճ իմն պսակ հանգիսացեալ ի գլուխ Մօրս մեր Հայաստանի՝ ընդ ամենայն տեղիս կանգնէին և հաստատէին զեկեղեցիս, զվանօրայս, զդպրոցս և զայլ բազում բարեգործական վայրս, յորս աստուածպաշտութեանն արփիական լոյս բոցաճաճանչ փայլէր և ծաւալէր ի սիրտս և ի միտս ամենից Հայազնեայց։ Մայրենի լեզու մեր աստուածա-

շնորհ սքանչելի կատարելագործութեամբ Հայկական աթութայից և գրականութիւն ազգիս որ քան զօր ընդհանրացեալ՝ զմտաւորական և զբարոյական յառաջադիմութիւն Հայ մանկտւոյն յապահովի կացուցանէր, բուռն ջանք ոխերիմ և գիշերավաստակ թշնամեաց Եկեղեցւոյ և Ազգի՝ հանդերձ բազմատեսակ որոգայթիւք ի նոցունց լարելովք՝ ինքեանք յինքեանս խորտակեալ կործանէին և անհետանային առաջի առաքինութեանց երանելի Թարգմանչաց մերոց, և նաև ազգութեան մերոյ առաւթուր հարեալ զլեռնակուտակ ամեհի ալիս յողնախուռն արկածից և փորձանաց՝ ապահով իմն ժամանէր ի դէմ եղեալն նպատակ ի նաւահանգիստն փրկութեան, իսկ մանկունք նորոյս սիօնի պճնազարդեալ լուսով գիտութեանց և աստուածպաշտութեան մակաղէին ի վայրի դալարուոջ երկնապատգամ աւետարանական վարդապետութեանց և առ ջուրբս հանգստեան երջանկաւէտն խաղաղութեան:

Արդարև եղեն դառնակսկիծ ժամանակք՝ յորս հակառակորդք Եկեղեցւոյ մերոյ յանդուգն խիզախեալ սպառնային սպառսպուռ կործանել զայն և զաւերակսըն անգամ և զյիշատակս հայութեան և Հայորերոյ բառնալ յերեսաց երկրի, այլ սակայն բարեխնամ Աջն Անեղին յաւէտ հովանի և պաշտպան կացեալ առաքելական Եկեղեցւոյ մերում և Ազգիս՝ հասանէր ի թիկունս օգնութեան՝ շնորհելով մեզ զանձնուրաց՝ զբարեկիրթ եկեղեցականս և զհովիւս, որք զերկնայնոցն բերելով յանձինս զնմանութիւն՝ հանապազ զհետ կրթէին աստուածայնոցն պատուիրանաց, յամենայն դէպս պահապան և պաշտպան հանդիսանային իրուանց՝ գոյութեան և ինքնուրոյնութեան Եկեղեցւոյ մերոյ և ի նոյն խրախուսէին զջերմեռանդ իշխանս և զհամօրէն ժողովուրդս, որ ի ստիպել հարկին արեամբ չափ շահատակեալ յաջողեցան անարատ և պայծառ պահպանել զկրօնս մեր և ըզսուրբ Եկեղեցի:

Այլ աւաղ, քանի՜ անհամեմատ տարբերութիւն նշմարի յանցեալն ընդ ներկայիս, յորում թշուառ որդիք Հայկայ սփռեալք ի զանազան կողմանս աշխարհի՝ յանհնարինս տագնապին ի խաւարի տգիտութեան՝ ակնապիշ և անհամբեր հայցելով զօգնութիւն, և ձայն աղաղակի նոցա առ համազգայինս ի ժտումն բարոյական ձեռնտուութեան մինչև յերկինս հասանէ, բայց սակաւք են որ լսեն, և արժա՞ն իցէ արդեօք անտարբեր կալ ի լուր աղիողորմ հեծեծանաց և սրտաճմլիկ տառապանաց համարիւն եղբարց սիրելեաց. զի եթէ այլ ևս յարատևեսցեն որդիք Հայկայ ի խաւարի տգիտութեան, ի ներկայիս քօղարկեալ վտանգք կորստեան ծանրագոյն կարեն լինել և անխուսափելիք. քանզի ըստ Փրկչականն բանի՝ հունձք բազում գոլով և մշակք սակաւ առ ի կարող լինելոյ օգնել բանաւոր Հօտիս սիրելւոյ՝ և որք են՝ ըստ մեծի մասին ի տըգիտութիւն գոլով խոնարհեալ՝ անհամաձայն բոլորովին ընթացից և պահանջմանց լուսաւոր ժամանակիս, միթէ հնա՞ր ինչ իցէ ակնկալել ի նոցանէ զփրկութիւն Եկեղեցւոյ. ապաքէն տարակուսելի է այն, որով և ապագայն ազգութեան մերոյ նըսեմ և կարի վտանգալից՝ եթէ ո՛չ դէթ

այժմէն կանխեսցուք զարժանն հոգալոյ։ Եւ զիա՞րդ այս եղիցի, եթէ ոչ պատրաստելով զարժանաւոր հովիւս և զհմուտ վարդապետս ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Ազգի։

Արդէն քաջ իսկ զգացեալ մեր կանխաւ զայս ամենայն ըստ նեպուհ և սրբազան պարտուց պաշտաման մերոյ՝ ահաւասիկ բազում ճգամբ և դառն աշխատութեամբ պատրաստեցաք զՃեմարան ժառանգաւորաց առ ի Մայր Աթոռս մեր ի սուրբ Էջմիածին, զորոյ մտադիր եմք Տերամբ օրհնել զբացումն ի յառաջիկայ ամսեան Սեպտեմբերի ներկայ տարւոյս։ Այլ քանզի համայն աշակերտք պարտին լինել ձրիաթոշակ, որոց թիւ լիցի առ այժմ առ նուազն յեօթանասուն և հինգ անձինս, անձեռնհաս գտանիմք յարդեանց Աթոռոյս ևեթ հոգալոյ զամենայն նիւթական պէտս Ճեմարանի և զանհրաժեշտ զծախսն՝ որք լինիցին անշուշտ. վասն որոյ վստահացեալ յօգնութիւնս և ի ձեռնտուութիւնս սիրելի և հարազատ որդւոց Մայր Աթոռոյս Հայաստանեայց և մեր՝ փութամք խնդրել ի ձէնջ, զի որք ձեռնհաս իցեն՝ ըստ կամաց իւրեանց և կարեաց յօժարամտեսցին ընդունել զմի կամ առաւել որդեգիրս՝ նուիրելով և հաստատելով ի տարեկան ծախս նոցա՝ զերեքհարիւր ռուբլիս։ Յուսամք զի ի նպաստից բարեպաշտ ազգայնոց մերոց սատարեալ՝ զպակասորդսն մեք մեզէն ամբողջացուցանել յայլոց աղբերաց յաջողեսցուք, որով և զյարատեւութիւն Ճեմարանիս յապահովի կալցուք յապագային. իսկ բարոյական արդասիք նորին անշուշտ լինիցին պսակեսցեն զակնկալութիւն մեր, և՛ Ազգի և՛ Եկեղեցւոյ։

Ո՛չ աւելորդ համարիմք յիշել աստանօր և զայն, զի որք միանուագ կամիցին նուիրել զգումար ինչ, որոյ տոկոսիքն բաւական իցեն ի վճար տարեկան ծախուց գէթ միոյ որդեգրի, անուանք այնպիսեաց արձանագրեսցին ի վերջ իւրաքանչիւր մատենից հրատարակելոց ի տպարանէ Մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի սկսեալ յօրէ բացման Ճեմարանի։

Արդ՝ լիայոյս ակնկալութեամբք յանձն առնեմք զայս Կոնդակ մեր և զմատեան ի ձեռն . . Վարդապետի . . . հարազատ միաբանի Սրբոյ Էջմիածնի, զոր յատկապէս առաքեալ եմք յայդոսիկ կողմանս առ ի ընտրել զաշակերտս Ճեմարանի ի քաղաքաց և գիւղօրէից կանխաւ առ ի մէնջ նշանակելոց ըստ տպագրեալ Հրահանգին, որում և պատուիրեալ եմք դիմել առ բարեպաշտութիւնս Ձեր և խնդրել զօգնութիւնս ի նպաստ բարենպատակ գործառնութեանց մերոց։ Մնայ ազգասէր, ուսումնասէր և առաքինափայլ որդւոցդ մերոց սիրելեաց՝ ի սէր Ազգիս և Եկեղեցւոյ մտադիւր սիրով ընդունել զհրաւէր մեր և զյորդորանս՝ ստորագրելով յայս մատեան զնուէրս ձեր ըստ իւրաքանչիւրոցդ բաղձանաց և կարողութեանց։

Մաղթեմք ի Տեառնէ մերմէ և ի Փրկչէ Յիսուսէ Քրիստոսէ փոխարինել օժանդակողացդ բարերարաց զհարիւրապատիկն և զհազարապատիկն աստ և ի հանդերձելումն, և Տէր պարգևեսցէ զձեզ ամենայն բարեմասնութեամբք հոգւոյ և մարմնոյ՝ շնորհելով զյաջողութիւն ամենայն գործառնութեանց ձերոց և զվա-

յիշս երկնից Արքայութեան ի կեանսն յաւիտենականս: „

ԵՐԿՐԱՇԱՐԺ Ի ԴԱՎՐԷԺ.

Ի Դավրիժոյ ուղղեալ մի նամակէն կիմանամք որ, ամսոյս 15 ին լուսանալոյն կամ ընդ արշալոյսն՝ այս ինքն ժամը 4 էն 15 րոպէ անցած՝ մի րոպէի չափ տեւողութեամբ՝ հիւսիսէն հարաւ ցնցելով երկրաշարժ պատահած է:

Երկրաշարժի սաստկութենէն շատ շէնքեր վնասուած են:

—Երկուուց կործանման տարին ևս անդ այնպիսի՛ երկրաշարժ մի պատահած է եղել:—

Հայոց Եկեղեցիք և Առաջնորդարանն ևս թեթև խախտումներ ստացած է:

Փլատակաց ներքև մի քանի թրքեր մեռած են:

Ինչպէս որ բնական է, բնակիչքն առհասարակ ահուդողի մէջ են եղած:

Ա. ԵՒ Բ. ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ.

Շատ ժամանակ չէ՛ որ Ընծայաբերութիւն անուամբ երկու տետրակներ մի զկնի միոյ ի լոյս ընծայուեցան:

Առաջնոյն համար թէպէտ լռեցինք, սակայն երկրորդին համար՝ յորում մի Ընծայաբերութ անձը վաճառեալ գրքէն եղած և կցուած նամակի խեղացնող արտայայտութիւնքը՝ անտանելի և աններելի էր մեզ լռութեան տալ և պատրաստ էինք մի քանի դիտողութեամբք ի գգուշութիւն հրաւիրել ողջամիտ ընթերցողները՝ եթէ ի հաւատարիմ աղբերաց լսած չլինէինք՝ զի Գ. Գիւմրեցւոյ նպատակին և կամաց հակառակ եղած է այս նամակի հրատարակութիւնը, և որպէս հաւաստեցին՝ պարունակութենէն տեղեկութիւն անգամ չունի, ուստի արդէն գրած և պատրաստած է հերքումները և պիտի յանձնէ ի մամուլ, վասն որոյ մեք ևս առ այժմ այսքանով կբաւականանամք, և կյուսամք որ՝ Գ. Գիւմրեցին մեր Եկեղեցւոյ և Ազգի շահերը քաջ կհասկանայ և այսուհետև այնպէս կշարժի՛ որ սպրդեալ թիւր կարծիքները կըջրէ և իւր բարեկամաց գայթակղեալ մտքերը կհանդարտեցընէ, միանգամայն դիմակաւոր և վարձեալ նամակագրին անունը պարզապէս կը հրապարակէ, որպէս զի ամեն ճշմարիտ Հայ քաջ ճանաչէ զնա և զգուշանայ Հայութեան ճակտին նախատինք եղող այնպիսի՛ անդամէ:

ՀԱՅՏՆԱԳԻՐ.

Այսպիսի անուամբ ևս մի նոր գրքոյկ երևեցաւ՝ որ ի Տփխիս հրատարակեալ է:

Ինչպէս Տփխիսայ Մեղուն գրած էր, լաւ կլինի՝ որ գրքուկի հեղինակն ի միասին շրջէ, որպէս զի ի՛նչ միտք որ կամի արտայայտել՝ բերանացի բացատրէ և հասկացնէ ընթերցողաց, կամ թէ ամեն տեղ թարգմաններ վարձէ:

Ի՞նչ օգուտ Ազգին և ի՞նչ փառք հրատարակողին այսպիսի չփոթ և Բաբիլոնեան խառնակութեանց նման անմիտ պարունակութիւն ունեցող տետրեր հրատարակելն: